— Ֆարիատ, գիտե՞ս ինչ կայ. եւս չէի ցանկանայ, որ իմ ծանօթներից մէկը տեսնէր ինձ, բայց դէպքը այնպէս բերեց, որ մենք հանդիպեցինք մէկմէկու. ես յուսով եմ, որ մեր հանդիպումը կը մնայ որպէս գաղտնիք:

— Ես չի՞ պիտի գիտենամ պատճառը:

— Այժմ ոչ. յետոյ ինքդ կհասկանաս... քանի օրից յետո...

— Ես Զաքարիայի նման մունջ կը մնամ, երբ այդ ցանկանում ես դու:

— Հա, այդպէս, ինձ հարկաւոր է առժամանակ ծածուկ մնալ...

Նա կրկին խորասուզուեցաւ իր մտածութիւնների մէջ:

Կարօյի զգուշացուցիչ պատոերը չափազանց զարմացրեց ինձ: Մի մարդ, որ ամբողջ տասն եւ երկու տարի հեռացել էր հայրենի երկրից, որին ամէնքը կորած էին համարում, որը այժմ մի հրաշքով կրկին յայտնուել էր, ցանկանում էր դարձեալ ծածուկ մնալ, ցանկանում էր իր ծանօթներին, բարեկամներին չհանդիպել: Ինչ՞ էր գաղտնիքը — այս հարցը սկսեց տանջել իմ միտքը:

Անցնելով աւելի քան կէս մղոն ճանապարհ, անապատի միջով, մենք հասանք այն տեղը, ուր անյիշելի ժամանակներից մնացել էին հին աւերակներ, որոնց մասին տատս պատմել էր ինձ այնքան շատ զարմանալի զրոյցներ: Փլատակների մէջ մի մինարեթ միայն մնացել էր ամբողջ եւ լուսնեակի լուսով նա աւելի գեղեցիկ էր, քան թէ ցերեկով: Նրա կապտագոյն մոզայիկները այժմ փայլում էին կախարդիչ հրապոյրներով: Ինձ երեւում էր, որ այդ մինարեթը, որպէս մի վիթխարի հսկայ, փառաւոր կերպով վեր բարձրացած փլատակների միջից, լի ոխակալութեամբ, սպառնում էր ժամանակներին — «դուք ոչնչացրիք իմ շրջակայքում բոլորը, ինչ որ ստեղծել էր արհեստը եւ ճարտարութիւնը, բայց ես կը մնամ, դեռ երկար կը մնամ եւ կը պատերազմեմ ձեզ հետ»...

Բայց ոչ, այսպիսի մտածութիւններ չէին զբաղեցնում իմ միտքը... այլ այն րոպէում, երբ հասանք աւերակների մօտ, ինձ տիրեց մի սարսափելի խռովութիւն: Երեխայութիւնից լսածներս այն հին, խորհրդաւոր աւերակների մասին, մինչ այն աստիճան գրգռել էին իմ սնահաւատութիւնը, որ ես լոյս ցերեկով երբեք չէի համարձակւում մօտենալ նրանց. իսկ ա՞յժմ, գիշերո՞վ, — դա զարհուրելի յանդգնութիւն էր: Այդ պատճառով ես իմ մտքում խիստ դժգոհ մնացի Կարօյից, երբ նկատեցի, որ ինձ այն տեղ է տանում:

Մօտենալով մինարեթին, Կարօն շոացրեց: Մինարեթի միջից պատասխանեցին նոյն զիլ եւ ձգական ձայնով: Ես խորին անվստահութեամբ ոտք կոխեցի նրա շեմքի վրայ, երբ Կարօն հրաւիրեց ներս մտնել: